

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-108>

ԳՐՈՒ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հագենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև Միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր)

GOR HOVHANNISYAN

Associate Professor at the Chair of German and European Constitutional and Administrative Law, as well as International Law at the University of Hagen, Attorney-at-law, Member of the Saxon Bar Association, Doctor of Laws (Berlin), Master of Administrative Sciences (Speyer)

ГОР ОГАНЕСЯН

Доцент кафедры немецкого и европейского конституционного и административного права, а также международного права в Университете Хагена, Адвокат, член Саксонской коллегии адвокатов, Доктор юридических наук (Берлин), Магистр административных наук (Шпайер)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (ՄԱՍ II) – ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՏԵՂԾՈՒՄԸ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

EUROPEAN LAW (PART II) – SOURCES OF LAW AND LAW-MAKING IN UNION LAW

ЕВРОПЕЙСКОЕ ПРАВО (ЧАСТЬ II) – ИСТОЧНИКИ ПРАВА И ЗАКОНОТВОРЧЕСТВО В СОЮЗНОМ ПРАВЕ

Սույն հոդվածը շարունակում է եվրոպական իրավունքի վերաբերյալ հոդվածների շարքը¹: Այստեղ լուսաբանվում են եվրոպական իրավունքի աղբյուրները, և ներկայացվում է նաև իրավաստեղծման գործընթացը: Այնուհետև ուրվագծվում են եվրոպական իրավունքում գործող կառուցվածքային սկզբունքները:

I. Իրավունքի աղբյուրները

Եվրոպական նյութական իրավունքը կարելի է բաժանել **առաջնային** և **երկրորդային** իրավունքի: ԵՄ իրավակարգի առնչությամբ ավելի ու ավելի հաճախ է գործածվում նաև «**երրորդային իրավունք**» հասկացությունը²: Դրա ներքո պետք է հասկանալ այն իրավական

¹ Առաջին մասը տես Հովհաննիսյան, Դատական իշխանություն 280-282/2022, էջ 92-100:

² Արդեն գործածում է նաև Գերմանիայի Դաշնային ՍԴ-ն, տես, օրինակ, BVerfGE 123, 267 Rn. 110 – Lissabon: Այդ

ակտերը, որոնք ընդունվում են ԵՄ մարմինների երկրորդային իրավական ակտերի հիման վրա³, օրինակ՝ երբ Հանձնաժողովը ԵՄԳՊ 290-րդ հոդվածի համաձայն՝ գործում է իրեն պատվիրակված իրավաստեղծ լիազորության հիման վրա, կամ երբ Հանձնաժողովը կամ Խորհուրդն ընդունում են կատարողական հրահանգներ՝ համաձայն ԵՄԳՊ 291-րդ հոդվածի⁴:

1. Առաջնային իրավունքը

Իբրև առաջնային իրավունք բնորոշվում են *հիմնադիր պայմանագրերը* (ԵՄՊ և ԵՄԳՊ), դրանց պատկանող արձանագրություններն ու հավելվածները, ինչպես նաև հիմնական իրավունքների խարտիան (ՀԻԽ): Առաջնային իրավունքի մաս են նաև եվրոպական իրավունքի չգրված իրավական սկզբունքները (տես ԵՄՊ 6-րդ հոդ. 3-րդ մասը): Եվրոպական իրավունքն ունի աստիճանական կառուցվածք, որի զագաթին գտնվում է առաջնային իրավունքը: Առաջնային իրավունքն ունի սահմանադրաիրավական դեր⁵: Հետևաբար, այն սահմանափակում է ԵՄ օրենսդրի կարգավորման ազատությունը և ծառայում է իբրև չափման մասշտաբ, երբ խոսքը վերաբերում է երկրորդային իրավունքի համապատասխանությանն առաջնային իրավունքին:

ա) Պայմանագրերը

Պայմանագրերը «Միության հիմքն են» (ԵՄՊ 1-ին հոդ. 3-րդ մասի 1-ին նախ.), երկուսն էլ ունեն նույն մակարդակը (ԵՄՊ 1-ին հոդ. 3-րդ մասի 2-րդ նախ.): **Եվրոպական միության մասին պայմանագիրը (ԵՄՊ) և Եվրոպական միության գործունեության մասին պայմանագիրը (ԵՄԳՊ)** տասնամյակներ տևած քննարկումների արդյունք են: ԵՄՊ-ն ամրագրում է ԵՄ-ի կազմակերպաիրավական հիմքը և զգալիորեն ավելի կարճ է, իսկ ԵՄԳՊ-ն համակողմանիորեն նկարագրում է Միության խնդիրներն ու իրավասությունները: Պայմանագրերը կարող են փոփոխվել՝ համաձայն ԵՄՊ 48-րդ հոդվածի: Ընդ որում՝ ԵՄՊ 48-րդ հոդ. 2-5-րդ մասերը կարգավորում են պայմանագրերի փոփոխման սովորական, իսկ 48-րդ հոդ. 6-րդ և 7-րդ մասերը՝ պարզեցված ընթացակարգը: Սովորական ընթացակարգի շրջանակում պայմանագրերի փոփոխության համար անհրաժեշտ է անդամ պետությունների վավերացումը:

բ) Հիմնական իրավունքների խարտիան⁶

Ըստ ԵՄՊ 6-րդ հոդ. 1-ին մասի՝ Հիմնական իրավունքների խարտիան (ՀԻԽ) հավասար է պայմանագրերին: Խարտիան պարունակում է հիմնական իրավունքների ցանկ՝ ոգեշնչված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից (ՄԻԵԿ) և անդամ պետությունների սահմանադրություններից: Այդպիսով ազգային հիմնական իրավունքների և միջազգային մակարդակում ՄԻԵԿ-ի կողքին հիմնական իրավունքների պաշտպանություն է երաշխավորվում նաև միութենական մակարդակում:⁷

գ) Ընդհանուր իրավական սկզբունքները

Պայմանագրերի, արձանագրությունների և ՀԻԽ-ի իրավադրույթների կողքին եվրոպական իրավունքը ներառում է նաև չգրված առաջնային իրավունքը: Դրանք կոչվում են նաև եվրոպական իրավունքի ընդհանուր իրավական սկզբունքներ⁸: Նորմատիվ հիմքը ԵՄԳՊ 340-րդ հոդ. 2-րդ մասն է, ըստ որի՝ Միության արտապայմանագրային պատասխանատվությունը

հասկացության քննադատությունը տես Ruffert in Callies/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 11:
³ Nettesheim in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 68. EL 2019, AEUV Art. 288 (Aug. 2012) Rn. 31.
⁴ Sնու Lange, JuS 2019, 759:
⁵ Sնու Nettesheim in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 68. EL 2019, AEUV Art. 288 (Aug. 2012) Rn. 28:
⁶ Ընդհանուր պատկերացում տալիս են Voßkuhle/Wischmeyer, JuS 2017, 1171:
⁷ Բազմամակարդակ համակարգում հիմնական իրավունքների պաշտպանության մասին տես Ludwigs/Sikora, JuS 2017, 385:
⁸ Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 15.

որոշվում է «ընդհանուր իրավական սկզբունքներով, որոնք ընդհանուր ճանաչում ունեն անդամ պետությունների իրավակարգերում»⁹:

Կարևոր դեր է խաղում *համաչափության սկզբունքը*, որը հիշատակվում է նաև ՀԻԽ-ում (ՀԻԽ 52-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ նախ.)¹⁰: Իբրև ընդհանուր իրավական սկզբունք Միության մարմինների ու հաստատությունների, ինչպես նաև ազգային պետական մարմինների գործողությունների համար, համաչափության սկզբունքը ճանաչված է նաև *ԱԵԴ-ի* կողմից¹¹: Եվ, վերջապես, ԵՄՊ 5-րդ հոդ. 4-րդ մասում այն ամրագրված է իբրև սկզբունք Միության գործողությունների համար, բայց այս դեպքում ոչ թե քաղաքացիների հանդեպ իշխանական վարչարարության տեսանկյունից, այլ Միության ու անդամ պետությունների հարաբերություններում:

Հիմնական իրավունքների խախտումն ստուգելիս պետք է կիրառել համաչափության սկզբունքը: Անդամ պետությունների կողմից շուկայի ազատության սահմանափակումների դեպքում նույնպես սահմանափակումների արդարացումն ստուգելիս պետք է հաշվի առնել համաչափության սկզբունքը: Սկզբունքը պետք է հաշվի առնել նաև ընդհանրապես իբրև եվրոպական օրենսդրի համար գծված սահման¹²:

Համալսարանական քննությունների համար կարևոր են նաև *վստահության պաշտպանության* և *իրավական անվտանգության* սկզբունքները:

Կիրառման օրինակ: Ոչ իրավաչափ կերպով տրամադրված դրամական օժանդակությունը հետպահանջելու դեպքում¹³ օգնություն ստացողը կվկայակոչի վստահության պաշտպանության սկզբունքը՝ օժանդակությունը վերադարձնելուց խուսափելու համար: Կախված կոնկրետ իրավիճակից՝ կարող է առավելություն ստանալ կամ օժանդակություն ստացողի վստահության շահը, կամ օժանդակությունը վերադարձնելու առնչությամբ հանրային շահը:

Պատմական տեսանկյունից եվրոպական մակարդակում հիմնական իրավունքների պաշտպանության ակունքը նույնպես ընդհանուր իրավական սկզբունքներն են: Արձագանքելով Գերմանիայի Դաշնային ՍԴ-ի *Solange I* որոշմանը¹⁴ *ԱԵԴ-ն* անդամ պետությունների սահմանադրությունների հիման վրա զարգացրել է հիմնական իրավունքների վերաբերյալ համակողմանի դատական պրակտիկա¹⁵: Այդ չգրված միութենական հիմնական իրավունքները թեև մեծ մասամբ ամրագրվել են *ՀԻԽ-ում*, բայց ԵՄՊ 6-րդ հոդ. 3-րդ մասում հստակեցվում է, որ *ՀԻԽ-ը* ոչ թե փոխարինում է ընդհանուր իրավական սկզբունքներից բխող հիմնական իրավունքները, այլ լրացնում է դրանք:

Հուշում: Ընդհանուր իրավական սկզբունքներից պետք է սահմանազատել եվրոպական իրավունքի կառուցվածքային սկզբունքները¹⁶: Վերջինների դեպքում խոսքն «այն առաջնային նորմերի մասին է, որոնք վերաբերում են մի նյութի ամբողջին»¹⁷, այսինքն՝ նորմերի,

⁹ Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 15.

¹⁰ Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 19.

¹¹ Calliess in Calliess/Ruffert, EUV/AEU, 2022, EUV Art. 5 Rn. 44. Տե՛ս, օրինակ, միայն ԱԵԴ, C-524/07, EC-LI:EU:C:2008:717 Rn. 54 ff – Kommission ./ Österreich.

¹² Տե՛ս Kühling/Drechsler, JuS 2017, 335:

¹³ Օրինակը հիմնված է ԱԵԴ, C-205–215/82, ECLI:EU:C:1983:233 = Slg. 1983, 2633 – Deutsche Milchkontor որոշման վրա: Դատական պրակտիկայից մեկ այլ օրինակ է միութենական օրենսդրի կաշկանդվածությունը վստահության պաշտպանության սկզբունքով, տե՛ս ԱԵԴ, C-170/86, ECLI:EU:C:1988:214 = Slg. 1988, 2355– von Deetzen:

¹⁴ BVerfGE 37, 271 – Solange I, տե՛ս նաև BVerfGE 73, 339 – Solange II:

¹⁵ Տե՛ս Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 17՝ ԱԵԴ-ի դատական պրակտիկայից բազմաթիվ օրինակներով:

¹⁶ Եվրոպական իրավունքի հիմնարար սկզբունքների՝ իբրև սահմանադրական սկզբունքների մասին տե՛ս v. Bogdandy, EuR 2009, 749:

¹⁷ v. Bogdandy, EuR 2009, 749 (761):

որոնք ազգային սահմանադրական իրավունքում հայտնի են իբրև կառուցվածքային սկզբունքներ: Ըստ այդմ՝ ազատության և ժողովրդավարության սկզբունքները կամ լոյալ համագործակցության սկզբունքը Եվրոպական իրավունքի այդպիսի սկզբունքներ են, տես նաև ԵՄՊ 2-րդ և 3-րդ հոդվածները (դրա մասին ստորև II. կետի տակ):

2. Երկրորդային իրավունքը

Երկրորդային իրավունքը ԵՄ մարմինների կողմից պայմանագրերում նրանց վերապահված իրավասությունների հիման վրա ընդունված իրավունքն է¹⁸: Պայմանագրերում մասամբ ամրագրված է նաև գործելու ձևը (օրինակ՝ դիրեկտիվը ԵՄԳՊ 115-րդ հոդվածում), բայց որպես կանոն գործում է ԵՄԳՊ 296-րդ հոդվածը, որը մյուս բոլոր դեպքերի համար սահմանում է, որ ԵՄ մարմինները դեպքից դեպք ինքնուրույն են որոշում իրենց գործելու ձևը՝ «պահպանելով սահմանված ընթացակարգերը և համաչափության սկզբունքը»¹⁹:

ա) Իրավաստեղծումը

Եվրոպական օրենսդրական գործընթացի մասին տարրական գիտելիքներն անհրաժեշտ են ինչպես իրավանորմերի հարաբերակցությունը, այնպես էլ Միության վերազգային կառուցվածքը հասկանալու համար:

Եվրոպական իրավունքի իրավանորմերը բաժանվում են երկու խմբի՝ օրենսդրական ակտեր և օրենքի բնույթ չունեցող իրավական ակտեր: Տարբերիչ հատկանիշը, ըստ ԵՄԳՊ 289-րդ հոդ. 3-րդ մասի, այն է, թե արդյոք իրավական ակտն ընդունվել է ստորև ներկայացվող օրենսդրական գործընթացներից մեկում:

աա) Օրենսդրական ակտերը

Օրենսդրական գործընթացներն իրենց հերթին բաժանվում են երկու տեսակի՝ *սովորական* օրենսդրական գործընթաց, որը կարգավորված է ԵՄԳՊ 294-րդ հոդվածում, և *հատուկ* օրենսդրական գործընթաց, որը կարգավորված է պայմանագրերի տարբեր բաժիններում, բայց արդեն հիշատակվում է ԵՄԳՊ 289-րդ հոդ. 2-րդ մասում:

Օրենսդրական գործընթացում առկա երկու առանձնահատկություններ պայմանավորված են ԵՄ-ի՝ իբրև վերազգային կազմակերպության բնույթով: Դրանցից մեկը Խորհրդի հատուկ դերն է²⁰: Նա լրջորեն ներգրավված է օրենսդրական գործընթացում: Նա պետք է համաձայնություն տա յուրաքանչյուր օրենսդրական ակտին (տես, օրինակ, ԵՄԳՊ 294-րդ հոդ. 3-րդ մասը): Բացի դրանից՝ շատ ոլորտներում Խորհրդի հավանության համար անհրաժեշտ է *որակյալ մեծամասնություն*²¹, այն դեպքում, երբ միջազգային կազմակերպությունների մեծ մասում որոշումները կարող են ընդունվել միայն *միաձայն*: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ Հանձնաժողովը, համաձայն ԵՄՊ 17-րդ հոդ. 2-րդ մասի 1-ին նախադասության, օրենսդրական ակտերի համար ունի *օրենսդրական նախաձեռնության մենաշնորհ*²²: Ընդ որում՝ Հանձնաժողովը գործում է իբրև անկախ, միայն ԵՄ-ի շահերին ծառայող մարմին (ԵՄՊ 17-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ.) և օրինագծերը ներկայացնում է Խորհուրդ ու Խորհրդարան:

¹⁸ Nettesheim in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 68. EL 2019, AEUV Art. 288 (Aug. 2012) Rn. 30.
¹⁹ Haltern, EuropaR I, 2017, Rn. 862.
²⁰ Խոսքն այստեղ ԵՄ Խորհրդի մասին է, որը պետք է տարբերել Եվրոպական խորհրդից և Եվրախորհրդից: ԵՄ մարմինների մասին տես հոդվածաշարի առաջին մասը՝ Հովհաննիսյան, Դատական իշխանություն 280-282/2022, էջ 96-100, հատկապես 25-րդ տողատակի ծանոթագրությունը:
²¹ Համաձայն ԵՄՊ 16-րդ հոդ. 4-րդ մասի՝ այդ պահանջը պետք է միշտ բառացիորեն նախատեսված լինի պայմանագրերում:
²² Չնայած դրան՝ կան այնուամենայնիվ առանձին բացառություններ Հանձնաժողովի «նախաձեռնության իրավունքի մենաշնորհից», տես Martenczuk in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 68. EL 2019, EUV Art. 17 (Juli 2016) Rn. 55:

(1) Սովորական օրենսդրական գործընթացը

Սովորական օրենսդրական գործընթացը մանրամասն նկարագրվում է ԵՄԳՊ 294-րդ հոդվածում²³: Այն բաժանվում է ընդհուպ **ութ քայլի**, որոնք, սակայն, ոչ բոլորը պիտի պարտադիր պահանջվեն: Կախված ընթացքից՝ Խորհրդարանն ունի **վետոյի իրավունք**, օրինակ՝ երկրորդ ընթերցման շրջանակում՝ ըստ ԵՄԳՊ 294-րդ հոդ. 7-րդ մասի «բ» կետի:

Այսպիսով, Հանձնաժողովի օրենսդրական նախաձեռնությունից (ԵՄԳՊ ձևակերպմամբ՝ առաջարկից) հետո այս գործընթացը կախված է ամենից առաջ Խորհրդարանի ու Խորհրդի համագործակցությունից:

(2) Հատուկ օրենսդրական գործընթացը

Հատուկ օրենսդրական գործընթացը որոշվում է համապատասխան իրավասության մասին նորմով²⁴ (տես, օրինակ, ԵՄԳՊ 289-րդ հոդ. 2-րդ մասը): Այս գործընթացին բնորոշ է, որ առաջատար դեր ունի կամ Եվրոպական խորհրդարանը, կամ Խորհուրդը, և համապատասխանաբար մյուս մարմինը պետք է մասնակից դարձվի գործընթացին²⁵:

Հատուկ օրենսդրական գործընթացը կարելի է ստորաբաժանել **համաձայնության գործընթացի**²⁶ և **լուսնների գործընթացի**,²⁷ կախված նրանից, թե անհրաժեշտ է Եվրոպական խորհրդարանի համաձայնությունը, թե նրան լսելը: Չլսելն օրենսդրական գործընթացի էական թերություն է ԵՄԳՊ 263-րդ հոդ. 2-րդ մասի իմաստով, որի հետևանքն օրենսդրական ակտի ոչ իրավաչափությունն է²⁷: Իրավական ակտն ընդունվում է Եվրոպական խորհրդարանի կողմից՝ Խորհրդի մասնակցությամբ, կամ Խորհրդի կողմից՝ Խորհրդարանի մասնակցությամբ (ԵՄԳՊ 289-րդ հոդ. 2-րդ մաս)²⁸:

(3) Trilogue

Միութենական օրենսդրության կարևոր բաղադրիչ են դարձել այպես կոչված *Trilogue-ները*: Դրանք ԵՄ երեք մարմինների՝ Հանձնաժողովի, Խորհրդի ու Խորհրդարանի միջև միջինստիտուցիոնալ քննարկումներ են: Դրանք որոշ իմաստով հաշտեցման՝ նախորդող ու ոչ ֆորմալ ընթացակարգ են²⁹: Նորմերով սահմանված օրենսդրական գործընթացներից այս շեղման պատճառը օրենքների ընդունման արագացումն է: *Trilogue-ների* աճմանը նպաստել է նաև փոքր և ոչ հրապարակային խմբերում փոխզիջումների գնալու մեծ պատրաստակամությունը, ինչպես նաև քաղաքական որոշումներ կայացնելու աճող բարդությունը³⁰:

Թեև անվիճելի են *Trilogue-ների* գործնական առավելությունները, բայց դրանք

²³ Սովորական օրենսդրական գործընթացի մասին մանրամասն տես Haratsch/Koenig/Pechstein, EuropaR, 2018, Rn. 344f., գործընթացի համառոտ նկարագրությունը սխեմայով տես Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 79, մանրամասն սխեմա տես Haltern, EuropaR I, 2017, Vor Rn. 1168:

²⁴ Հատուկ օրենսդրական գործընթացի դեպքերի թվարկումը տես Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 289 Rn. 3f.:

²⁵ Streinz, EuropR, 2019, § 6 Rn. 563.

²⁶ Օրինակ՝ պատգամավորների ստատուտի (ԵՄԳՊ 223-րդ հոդ.) կամ քննիչ հանձնաժողովների (ԵՄԳՊ 226-րդ հոդ. 3-րդ մաս) մասին կարգավորումները՝ իբրև Խորհրդարանի օրենսդրական ակտերի օրինակ՝ Խորհրդի մասնակցությամբ, կամ, օրինակ, հակախտրական միջոցառումները (ԵՄԳՊ 19-րդ հոդ. 1-ին մաս) կամ Եվրոպական դատախազության մասին կարգավորումները (ԵՄԳՊ 86-րդ հոդ. 1-ին և 4-րդ մասեր)՝ իբրև Խորհրդի օրենսդրական ակտերի օրինակ՝ Խորհրդարանի համաձայնությամբ (օրինակներն ըստ՝ Streinz, EuropR, 2019, § 6 Rn. 564f.):

²⁷ EuGH, C-138/79, ECLI:EU:C:1980:249 Rn. 37 – Roquette Frères ./ Rat.

²⁸ Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 80.

²⁹ Haltern, EuropaR I, 2017, Rn. 1158.

³⁰ Haltern, EuropaR I, 2017, Vor Rn. 1155.

քննադատվում են ամենից առաջ դրանց ոչ թափանցիկության պատճառով³¹:

բբ) Օրենքի բնույթ չունեցող իրավական ակտերը

Օրենսդրական ակտերի կողքին եվրոպական իրավունքում գոյություն ունեն նաև Հանձնաժողովի՝ օրենքի բնույթ չունեցող **գործադիր իրավական ակտերը**: Այս կատեգորիայի մեջ են մտնում *պարտիկրակված իրավական ակտերը* (ԵՄԳՊ 290-րդ հոդ.) և *կարարողական իրավական ակտերը* (ԵՄԳՊ 291-րդ հոդ.): Հետևաբար, կանոնակարգերը, որոշումները կամ դիրեկտիվները (գերմ. *Verordnungen, Beschlüsse, Richtlinien*) կարող են լինել օրենքի բնույթ ունեցող կամ չունեցող իրավական ակտեր (տես ԵՄԳՊ 297-րդ հոդ. 2-րդ մասը), դասակարգման համար որոշիչ է միայն այն ընթացակարգը, որի միջոցով դրանք ընդունվում են³²:

բ) ԵՄԳՊ 288-րդ հոդվածի կատալոգը

Ներկայացված ընթացակարգերով ընդունվում է եվրոպական երկրորդային իրավունքը: Երկրորդային իրավական ակտերի համար կենտրոնական նորմը ԵՄԳՊ 288-րդ հոդվածն է, որը թվարկում է ԵՄ-ի տարբեր իրավական ակտերը: Ընդ որում, այդ կատալոգն **սպառնիչ չէ**:³³

աա) Կանոնակարգեր

Ըստ ԵՄԳՊ 288-րդ հոդ. 2-րդ մասի՝ կանոնակարգերն «ընդհանուր կարգավորումներ» են, այսինքն՝ ունեն ընդհանուր ու վերացական բնույթ և անմիջականորեն ուղղված են Միության մարմիններին, անդամ պետություններին և Միության քաղաքացիներին: Դրանք գործում են **անմիջականորեն**՝ առանց փոխակերպող ակտի անհրաժեշտության: Դրանք ունեն **կիրառման առաջնություն**: Ըստ այդմ՝ անդամ պետության օրենքը *չպետք է կիրառվի*, եթե այն հակասում է որևէ կանոնակարգի: Միության քաղաքացիները նույնպես կարող են անմիջականորեն վկայակոչել կանոնակարգը, եթե այն սուբյեկտիվ իրավունքներ է տրամադրում:

Քանի որ վարչական մարմինները պարտավոր են անմիջականորեն կիրառել կանոնակարգերը, ապա ազգային իրավունքի ու կանոնակարգի միջև հակասության դեպքում ծագում է վարչական մարմնի կողմից ազգային իրավունքի նորմը չկիրառելու իրավասության հարցը: Դա վիճելի է³⁴: Հօգուտ վարչական մարմնի նման իրավասության խոսում են եվրոպական իրավունքի կիրառման առաջնությունը և *Effet-utile*-սկզբունքը: Նման փաստարկման դեմ խոսում են, սակայն, օրենքով վարչական մարմնի կաշկանդվածությունը և այն, որ վարչական մարմինը նման դեպքերում հնարավորություն չունի դիմելու *ԱԵԴ* այդ հարցը նախապես պարզելու նպատակով³⁵: Ավելի համոզիչ միջին մոտեցումը բացառության կարգով ընդունում է վարչական մարմնի՝ ազգային նորմը չկիրառելու իրավասությունը եվրոպական իրավունքին *ակնհայտ հակասության* դեպքում³⁶: Այսպիսով, երբ ազգային

³¹ Մանրամասն քննադատություն տես Haltern, EuropaR I, 2017, Vor Rn. 1159 ff.

³² Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 81՝ բազմաթիվ օրինակներով, օրինակ՝ ԵՄՊ 7-րդ հոդ. 1-ին մաս, 14-րդ հոդ. 2-րդ մաս, 18-րդ հոդ. 6-րդ մասի 2-րդ ենթամաս:

³³ Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 98. ԵՄԳՊ 288-րդ հոդվածից դուրս գտնվող գործողությունների դասակարգման մասին տես Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 100–105: Այդ իրավական ակտերը կոչվում են չիշխատակված իրավական ակտեր:

³⁴ ԱԵԴ-ը հաստատում է ազգային նորմը վերացնելու պարտականությունը (տես, օրինակ, ԱԵԴ C-103/88, ECLI:EU:C:1989:256 = Slg. 1989, 1839 – Fratelli Costanzo): Վեճի մասին տես. Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 74 f.; Schwerdtfeger/Schwerdtfeger, Öffentl. Recht in d. Fallbearb., 2018, § 48 Rn. 713 f.:

³⁵ Mögele, BayVBl. 1993, 129 (131); Pagenkopf, NVwZ 1993, 216 (222); Papier, DVBl. 1993, 809 (814); Pietzcker, FS-Everling, S. 1095 (1105).

³⁶ Sfin Jarass, Grundfragen der innerstaatlichen Bedeutung des EG-Rechts, S. 102 ff.; Weber, EuR 1986, 1 (25 f.); Winter, NuR 1991, 453 (454); նույն ինքը, DVBl. 1991, 657 (666); Streinz/Herrmann, BayVBl. 2008, 1 (7 f.):

իրավունքը կոնկրետ դեպքն ակնհայտորեն այլ կերպ է կարգավորում, քան կանոնակարգը, ապա վարչական մարմինը պարտավոր է կիրառել կանոնակարգը:

բբ) Դիրեկտիվները

Դիրեկտիվներն ուղղված են բացառապես անդամ պետություններին: Նրանք սկզբունքորեն պարտավոր են սահմանված ժամկետում դիրեկտիվի կարգավորման բովանդակությունը փոխադրել ազգային իրավունք: Այսպիսով, դիրեկտիվներն սկզբում ընդունվում են եվրոպական օրենսդրի կողմից և հետո անդամ պետությունների ներպետական իրավական ակտերով ներդրվում ազգային իրավունքում: Դիրեկտիվներն ազգային իրավունքում ներդրելիս անդամ պետություններն ունեն *ներդրման ազատություն*: Այդ ազատությունն ամենից առաջ վերաբերում է դիրեկտիվի բովանդակությունն ազգային իրավունքում ներդրելու ձևին ու միջոցներին: Դրանով հնարավորություն է ստեղծվում պատշաճ կերպով արձագանքելու ազգային առանձնահատկություններին: Այս տեսանկյունից դիրեկտիվները կանոնակարգերի համեմատ եվրոպական իրավունքի՝ անդամ պետությունների ինքնիշխանությունը նվազ շոշափող միջոցներ են: Բովանդակային տեսանկյունից ներդրման ազատությունը հաճախ խիստ սահմանափակված է³⁷:

Անգամ եթե անդամ պետություններին է թողնվում ներդրման ձևի ու միջոցի ընտրությունը, նրանք այնուամենայնիվ պիտի պահպանեն *արդյունավետ ներդրման պահանջը*³⁸: Մասնավորապես, բավարար չէ դիրեկտիվի ներդրումը զուտ վարչական հրահանգների միջոցով³⁹: Անդամ պետությունը նաև չի կարող վկայակոչել այն հանգամանքը, որ մյուս անդամ պետությունները նույնպես չեն ներդրել դիրեկտիվը, կամ որ ներդրման համար սահմանված ժամկետը շատ կարճ է եղել⁴⁰:

Անգամ այդ ժամկետի ավարտից առաջ անդամ պետություններն իրավունք չունեն ընդունելու դիրեկտիվին հակասող իրավական ակտեր (այսպես կոչված *նախնական ներգործություն*)⁴¹: Բացի դրանից՝ ազգային իրավունքը պետք է հնարավորինս մեկնաբանվի *դիրեկտիվին համահունչ*⁴²: Այս սկզբունքը գործում է դիրեկտիվից առաջ ու հետո ընդունված ազգային իրավունքի համար⁴³:

Եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձը ցանկանում է օգտվել դիրեկտիվից բխող իրավունքներից, ապա նա սկզբունքորեն կարող է հենվել միայն դիրեկտիվի ազգային ներդրման վրա: Միայն ազգային նորմն է ուղղված ֆիզիկական և իրավաբանական անձանց: Դիրեկտիվն ինքը, ի տարբերություն կանոնակարգի, սկզբունքորեն չունի *անմիջական ներգործություն*: Որոշակի նախապայմանների դեպքում այս կանոնից կան **բացառություններ**:

Բացառության կարգով անմիջականորեն դիրեկտիվի դրույթը վկայակոչել կարողանալու համար անհրաժեշտ է, որ այն ազգային իրավունքում ներդրված չլինի կամ թերի ներդրված լինի, ներդրման ժամկետը լրացած լինի, ինչպես նաև դիրեկտիվի կոնկրետ դրույթը բովանդակության տեսանկյունից անպայման և բավարար չափով ճշգրիտ ձևակերպված լինի: Բովանդակային անպայմանությունը ենթադրում է անվերապահ և առանց պայմանների

³⁷ Մի օրինակ է սպառողների շահերի պաշտպանության իրավունքի ամբողջական ներդաշնակեցումը՝ Սպառողների իրավունքների մասին դիրեկտիվի հիման վրա (2011/83/ԵՄ):

³⁸ Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 28f.

³⁹ Տե՛ս ԱԵԴ, C-361/88, ECLI:EU:C:1991:224:

⁴⁰ Տե՛ս Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 29՝ ԱԵԴ-ի պրակտիկայից բազմաթիվ օրինակներով:

⁴¹ ԱԵԴ, C-129/96, ECLI:EU:C:1997:628 – Inter-Environnement Wallonie.

⁴² Այդ մասին տե՛ս Kühling, JuS 2014, 481; Mittwoch, JuS 2017, 296:

⁴³ ԱԵԴ, C-397/01–C-403/01, ECLI:EU:C:2004:584 – Pfeiffer.

կիրառելի նորմի առկայություն: Չպետք է անհրաժեշտ լինեն անդամ պետությունների կամ Միության մարմինների կողմից կատարման ենթակա այլ միջոցառումներ: Դրույթը բավարար չափով ճշգրիտ է, եթե այն աներկիմաստ կերպով սահմանում է մի պարտականություն, ընդ որում անորոշ իրավական հասկացությունների գործածությունը նորմի որոշակիությանը չի հակադրվում⁴⁴: Այս երեք իրավական նախապայմանների կողքին գոյություն ունի, ըստ դատական պրակտիկայի, նաև մի նորմատիվ նախապայման: Անմիջականորեն դիրեկտիվը վկայակոչելը պիտի լինի միայն ի վնաս այն անդամ պետության, որը պատշաճ կերպով չի ներդրել այն: Երրորդ անձանց ծանրաբեռնումն անթույլատրելի է⁴⁵: Դիրեկտիվներն ուղղված են անդամ պետություններին և ոչ անհատներին: Բացի դրանից, դա համապատասխանում է այն սկզբունքին, որ Միությունն անհատի վրա կարող է պարտականություններ դնել միայն կանոնակարգով⁴⁶:

Անմիջականորեն կիրառելի դիրեկտիվների դեպքում նույնպես ծագում է վարչական մարմնի կողմից ազգային իրավունքը չկիրառելու հարցը:⁴⁷

Իրավական պաշտպանություն ընդդեմ դիրեկտիվների կարելի է ստանալ առոչնչության հայցի միջոցով՝ համաձայն ԵՄԳՊ 263-րդ հոդվածի:

գգ) Որոշումը

Որոշումը մի առանձին դեպքի պարտադիր կարգավորումն է: Այն կարող է ուղղված լինել ինչպես անդամ պետություններին, այնպես էլ մասնավոր անձանց⁴⁸: Այդ պատճառով որոշումները համեմատելի են վարչական ակտերի հետ: Դրանք ներգործում են անմիջականորեն: Ինչպես որ դիրեկտիվների դեպքում է, որոշումները նույնպես կարող են անմիջական ներգործություն ունենալ անհատների նկատմամբ⁴⁹: Նման որոշման դեմ կարելի է ներկայացնել առոչնչության հայց ԵՄԳՊ 263-րդ հոդ. 4-րդ հոդվածի իմաստով: Ի տարբերություն հասցեատերերին ուղղված որոշումների, այսպես կոչված *անհասցեատեր որոշումները* կաշկանդում են միայն Միությանը և նրա հաստատություններին: Դրանով որոշումը տարբերվում է նաև կանոնակարգերից⁵⁰:

դդ) Հանձնարարականները և կարծիքները

Հանձնարարականն ու կարծիքը **ոչ պարտադիր** իրավական ակտեր են: Այնուամենայնիվ *առանձին սահմանափակ լիազորման սկզբունքը* գործում է նաև այս ակտերի համար, ուստի Միությունը դրանց ընդունման համար ունի լիազորման կարիք⁵¹: Հանձնաժողովի հանձնարարականները, օրինակ, հաճախ ծառայում են այն նպատակին, որ Հանձնաժողովը պատշաճ կատարի եվրոպական իրավունքի պահպանման նկատմամբ իր վերահսկողական ու կառավարման գործառույթը⁵²:

II. Եվրոպական իրավունքի կառուցվածքային սկզբունքները

Եվրոպական իրավունքը մեկնաբանելիս ու կիրառելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ կառուցվածքային սկզբունքները:

⁴⁴ Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 54f.

⁴⁵ Streinz, EuropR, 2019, § 5 Rn. 498.

⁴⁶ ԱԵԴ, C-91/92, ECLI:EU:C:1994:292 Rn. 24 – Paola Faccini Dori.

⁴⁷ Այս վեճի մասին տես վերևում II 2b (1) «Կանոնակարգեր» կետի ներքո:

⁴⁸ Herdegen, EuropaR, 2021, § 8 Rn. 64.

⁴⁹ Streinz, EuropR, 2019, § 5 Rn. 524.

⁵⁰ Schroeder, Grundkurs EuropR, 2021, § 6 Rn. 70.

⁵¹ Ruffert in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, AEUV Art. 288 Rn. 97.

⁵² Nettesheim in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 74. EL 2021, AEUV Art. 292 (Mai 2013) Rn. 13.

1. Կիրառման առաջնությունը

Եվրոպական իրավունքն ունի կիրառման առաջնություն անդամ պետությունների իրավունքի նկատմամբ⁵³: Դա նշանակում է, որ եվրոպական իրավունքին հակասող ազգային իրավունքը դառնում է անկիրառելի, բայց չի կորցնում իր իրավաբանական ուժը:

2. Effet-utile-սկզբունքը

Effet-utile-սկզբունքի նպատակը համապատասխան նորմի գործնական արդյունավետությունն է⁵⁴: Պայմանագրային ամրագրում ստացել է սկզբունքը ԵՄՊ 4-րդ հոդ. 3-րդ մասում և ԱԵԴ-ի կողմից հաճախ օգտագործվում է Միության իրավունքը մեկնաբանելու համար⁵⁵: Ըստ դրա՝ նորմը պետք է այնպես մեկնաբանել, որ նրա կարգավորման նպատակը «լավագույնս ձեռք բերվի» և հնարավորինս արդյունավետորեն դրսևորվի: ԱԵԴ-ը այս սկզբունքը գերմաներենով թարգմանում է իբրև «*volle Wirksamkeit*» կամ «*praktische Wirksamkeit*»⁵⁶:

Օրինակ՝ դիրեկտիվների անմիջական կիրառելիության մասին վերևում նշված վեճում ԱԵԴ-ն անմիջական կիրառելիության օգտին իր մոտեցումը հիմնավորում է *Effet-utile*-սկզբունքով⁵⁷:

3. Լոյալ համագործակցության սկզբունքը

Լոյալ համագործակցության սկզբունքը ԵՄՊ 4-րդ հոդ. 3-րդ մասում անդամ պետություններին պարտավորեցնում է «ձեռք առնել ընդհանուր և հատուկ բնույթի բոլոր պիտանի միջոցները Եվրոպական միության իրավունքից բխող իրենց պարտավորությունները կատարելուն պատակով»⁵⁸: Այն կարելի է բնորոշել իբրև ԵՄ-ի ֆունդամենտալ սահմանադրական կառուցվածքային սկզբունք⁵⁹: Այս սկզբունքն իրավական առումով պարտադիր է, ուստի կարող է ԱԵԴ-ի ու ԵԴ-ի կողմից դատական կարգով ստուգվել⁶⁰: Սկզբունքի դրսևորումներ են ինչպես անդամ պետությունների միջև *համագործակցության սկզբունքը (Kooperationsprinzip)*, այնպես էլ *միմյանց հետ հաշվի նստելու սկզբունքը (Prinzip der Rücksichtnahme)*⁶¹:

Օրինակ՝ եթե անդամ պետություններում ԵՄ իրավունքը կատարելիս կիրառվում են ազգային ընթացակարգային նորմերը (վարչական և դատական վարույթներում), ապա վարույթը չի կարող ավելի անբարենպաստ լինել, քան ներպետական վարույթի դեպքում է (*համարժեքության պահանջ*), և Միության իրավունքի կյանքի կոչումը չպետք է գործնականում անհնար դարձվի կամ չափազանց դժվարացվի⁶²:

Լոյալ համագործակցության սկզբունքը գործում է **եռաչափ**, այն է՝ ինչպես անդամ պետությունների ու Միության միջև և հակառակը, այնպես էլ անդամ պետությունների միջև հարաբերություններում⁶³:

4. Միության արժեքները

ԵՄՊ 2-րդ հոդվածում թվարկված են Միության արժեքները: Տնտեսական համայնքի հիման վրա Միությունը զարգացել ու աստիճանաբար դարձել է արժեքների համայնք:

⁵³ Միջազգային իրավունքի կիրառման առաջնության մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 145-146:

⁵⁴ Wegener in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 19 Rn. 16.

⁵⁵ Մանրամասն տե՛ս Potacs, EuR 2009, 465:

⁵⁶ Տե՛ս, օրինակ, ԱԵԴ, C-6/90 և C-9/90, ECLI:EU:C:1991:428 – Francovich:

⁵⁷ Տե՛ս, օրինակ, ԱԵԴ, C-41/74, ECLI:EU:C:1974:133 Rn. 12 – van Duyn ./ Home Office:

⁵⁸ ԱԵԴ, C-355/04, ECLI:EU:C:2007:116 Rn. 52 – Segi ua ./ Rat:

⁵⁹ Kahl in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 4 Rn. 97.

⁶⁰ Kahl in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 4 Rn. 106.

⁶¹ Kahl in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 4 Rn. 112.

⁶² Տե՛ս ԱԵԴ, C-312/93, ECLI:EU:C:1995:437 Rn. 12 – Peterbroeck:

⁶³ Schill/Krenn in Grabitz/Hilf/Nettesheim, Das Recht der EU, 74. EL 2021, AEUV Art. 4 (Jan. 2014) Rn. 61.

Նշված արժեքները սահմանադրական սկզբունքներ են, որոնք գործում են իբրև Միության կառուցվածքային պահանջներ⁶⁴: Արժեքների իրավական բնույթը դրսևորվում է հատկապես ԵՄՊ 7-րդ հոդ. 1-ին մասում դրանց վրա արվող հղմամբ: Արժեքների նկատմամբ հարգանքը Միությանն անդամակցելու նախապայմաններից մեկն է (ԵՄՊ 49-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ.):

Annotation. The first part of the four-part series of articles on European law starts with basic questions and the foundations of organisational law.

The second part explains the legal sources of the European Union law and also deals with the legislative procedures. In addition, the structural principles applicable in the European law are outlined.

The third part focuses on the fundamental rights of the European Union, which - in addition to the fundamental freedoms - are the essential individual rights of European primary law. The structural peculiarities from the perspective of the European and constitutional law are described, with a particular focus on the binding effect of the Charter of Fundamental Rights for the Member States.

The fourth part explains the fundamental freedoms as the central means for establishing the internal market.

Аннотация. Первая статья из 4 статей о европейском праве начинается с анализа базовых вопросов и основ организационного права.

Во второй части объясняются правовые источники права Европейского Союза, а также рассматриваются законодательные процедуры. Кроме того, изложены структурные принципы, применяемые в европейском праве.

Третья часть посвящена основным правам Европейского Союза, которые, в дополнение к основным свободам, являются существенными индивидуальными правами европейского первичного права. Описаны структурные особенности с точки зрения европейского и конституционного права, с особым акцентом на обязательное действие Хартии по правам человека для государств-членов.

В четвертой части объясняются основные свободы как центральное средство для создания внутреннего рынка.

Բանալի բառեր – Եվրոպական միություն, առաջնային իրավունք, երկրորդային իրավունք, կանոնակարգ, դիրեկտիվ, սովորական օրենսդրական գործընթաց, հատուկ օրենսդրական գործընթաց, գործնական արդյունավետության սկզբունք, լրյալ համագործակցության սկզբունք:

Keywords: *European Union, primary law, secondary law, regulation, directive, the ordinary legislative procedure, the special legislative procedure, the principle of the practical effectiveness, the principle of loyal cooperation.*

Ключевые слова: *Европейский Союз, первичное право, вторичное право, постановление, директива, обычная законодательная процедура, специальная законодательная процедура, принцип практической эффективности, принцип лояльного сотрудничества.*

Հովհաննիսյան Գ. - Հագենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև Միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, էլ. հասցե՝ gor.hovhannisyan@iw-partner.de:

Ներկայացվել է խմբագրություն 03.02.2023թ., տրվել է գրախոսության 03.02.2023 թ., երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս, իրավագիտության թեկնածու Գոռ Թորոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.:

⁶⁴ Calliess in Calliess/Ruffert, EUV/AEUV, 2022, EUV Art. 2 Rn. 8.